ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

8 հունիսի 2010 թ. թիվ 125-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***որոշում է.***

1. Հաստատել «Ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման հրահանգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի՝ «Ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 180-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հոկտեմբերի 1-ին:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ **Ա. Ջավադյան**

2010 թ. հունիսի 11
ք. Երևան

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի
թիվ 125-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

---------- Արթուր Ջավադյան

11.06 2010 թ.

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարի 2010 թվականի
30 հուլիսի թիվ 509-Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

---------- Տիգրան Դավթյան

30.07.2010 թ.

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Բ Ա Ժ Ի Ն I

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը սահմանում է ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը, ներկայացման պարտադիր հոդվածներն ու դրանց լրացման ցուցումները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) դրանց օրինակի ներկայացման կարգը:

2. Ապահովագրական ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են նրա բոլոր առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումների գործունեության ցուցանիշները:

3. Սույն հրահանգի իմաստով՝ հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

4. Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան է համարվում հունվարի 1-ից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Միջանկյալ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (ձև 7) միաժամանակ ցույց են տրվում նաև ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանի տվյալները:

5. Նոր ստեղծված ապահովագրական ընկերության համար առաջին հաշվետու տարի է համարվում նրա լիցենզիա ստանալու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

6. Լուծարվող ապահովագրական ընկերությունը ֆինանսական հաշվետվություններ է ներկայացնում տարեսկզբից մինչև օրենքով սահմանված կարգով լուծարման գործընթացի սկիզբն ընկած ժամանակաշրջանի համար:

7. Ապահովագրական ընկերությունը, լիցենզիան դադարեցված լինելու դեպքում, ֆինանսական հաշվետվություններ է ներկայացնում տարեսկզբից մինչև օրենքով սահմանված կարգով լիցենզիայի դադարեցման մասին Կենտրոնական բանկի որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

8. Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են վերլուծական (անալիտիկ) և ընդհանրացված (սինթետիկ) հաշվառման տվյալների հիման վրա:

9. Ապահովագրական ընկերություններն իրենց հայեցողությամբ կարող են ավելի մանրամասնել կամ խտացնել ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց կից ծանոթագրությունները՝ պահպանելով ՖՀՄՍ-ների (Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ընդունված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի կամ նախկին Մեկնաբանությունների մշտական կոմիտեի կողմից մշակված մեկնաբանությունների), ինչպես նաև սույն հրահանգով սահմանված պահանջները և ներկայացման պարտադիր հոդվածները:

10. Ֆինանսական հաշվետվություններում տվյալները ցույց են տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասներորդական նիշի: Ֆինանսական հաշվետվություններում փակագծերում ցույց տրված գումարները թվաբանական գործողություններում դիտվում են որպես բացասական թվեր:

11. Ֆինանսական հաշվետվությունները հրապարակելիս, պահանջվող վավերապայմանները պետք է արտացոլվեն բոլոր հաշվետվական ձևերի մեջ առանձին: Ֆինանսական հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ պարտադիր վավերապայմանները.

1) անվանումը,

2) հաշվետու ամսաթիվը կամ ժամանակաշրջանը, որի համար կազմված է հաշվետվությունը,

3) ապահովագրական ընկերության անվանումը,
4) գտնվելու վայրը,
5) թվային ցուցանիշների ներկայացման չափսը (ֆորմատը),
6) պատասխանատու անձանց ստորագրությունները:

12. Ապահովագրական ընկերությունները օրենքով և սույն հրահանգով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը հրապարակելուց հետո հնգօրյա ժամկետում պարտավոր են Կենտրոնական բանկի վիճակագրության վարչությանը ներկայացնել այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը և ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթի էլեկտրոնային տարբերակը:

13. Ապահովագրական ընկերությունները տարեկան ֆինանսական հաշվետվությունները արտաքին աուդիտի եզրակացությամբ օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով մամուլում հրապարակելուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր են Կենտրոնական բանկ ներկայացնել բացահայտված խախտումների և փոփոխությունների առաջացման պատճառները, եթե ապահովագրական ընկերության արտաքին աուդիտի եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների արդյունքում ապահովագրական ընկերությունը խախտում է հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, սխալ է հաշվարկում և արտացոլում ապահովագրական պահուստները կամ այդ հաշվետվություններում արտացոլված ցուցանիշները, տողերը փոփոխվում են 5% և ավելի չափով:

Գ Լ ՈՒ Խ 2

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ստորև ներկայացվող սկզբունքների հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՍ-ներով:

15. Ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

1) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (ձև 1)՝ համաձայն հավելված 1-ի,

2) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ձև 2ա)՝ համաձայն հավելված 2-ի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ձև 2բ)՝ համաձայն հավելված 3-ի, կամ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ձև 2գ)՝ համաձայն հավելված 4-ի,

3) սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն (ձև 3)՝ համաձայն հավելված 5-ի,

4) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ պատրաստված ՖՀՄՄ 7-ով նախատեսված ուղղակի մեթոդի կիրառմամբ (ձև 4ա)՝ համաձայն հավելված 6-ի, կամ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ պատրաստված ՖՀՄՄ 7-ով նախատեսված անուղղակի մեթոդի կիրառմամբ (ձև 4բ)՝ համաձայն հավելված 7-ի,

5) ֆինանսական հաշվետվությունների ձևերին կից ծանոթագրությունները (ձև 5)՝ համաձայն հավելված 8-ի,

6) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ համադրելի ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, երբ կազմակերպությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառում է հետընթաց, կամ կատարում է իր ֆինանսական հաշվետվությունների հոդվածների հետընթաց վերահաշվարկ, կամ երբ այն վերադասակարգում է իր ֆինանսական հաշվետվությունների հոդվածները (ձև 1՝ համադրելի ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի համար լրացված):

16. Ապահովագրական ընկերությունները ֆինանսական հաշվետվությունների հետ հրապարակում են նաև աուդիտորական եզրակացության համառոտ ամփոփագիրը:

17. Ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում ապահովագրական ընկերությունը հրապարակում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ապահովագրական ընկերությունը ֆինանսական հաշվետվությունները կարող է հրապարակել նաև առանձին:

18. Ապահովագրական ընկերությունները՝ հաշվետվությունների ձևերը ավելի մանրամասնելու արդյունքում, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում (ձև 5) նախատեսված հոդվածները մյուս ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու դեպքում, այդ հոդվածները կարող են չարտացոլվել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

19. Ապահովագրական ընկերություններն իրենց հայեցողությամբ կարող են ավելի մանրամասնել կամ խտացնել ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց կից ծանոթագրությունները՝ պահպանելով ՖՀՄՄ-ների և սույն հրահանգով սահմանված պահանջները և ներկայացման պարտադիր հոդվածները:

Գ Լ ՈՒ Խ 3

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. Ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ստորև ներկայացվող սկզբունքների հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ ՖՀՄՄ-ներով:

21. Ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող միջանկյալ (եռամսյակային) ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

1) միջանկյալ հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին (ձև 6)՝ համաձայն հավելված 9-ի,

2) միջանկյալ հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին (ձև 7ա)՝ համաձայն հավելված 10-ի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ձև 7բ)՝ համաձայն հավելված 11-ի, կամ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ձև 7գ)՝ համաձայն հավելված 12-ի,

3) սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն (ձև 8)՝ համաձայն հավելված 13-ի,

4) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ պատրաստված ՖՀՄՍ 7-ով նախատեսված ուղղակի մեթոդի կիրառմամբ (ձև 9ա)՝ համաձայն հավելված 14-ի, կամ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ պատրաստված ՖՀՄՍ 7-ով նախատեսված անուղղակի մեթոդի կիրառմամբ (ձև 9բ)՝ համաձայն հավելված 15-ի,

5) ֆինանսական հաշվետվությունների ձևերին կից ծանոթագրությունները (ձև 5)՝ համաձայն հավելված 8-ի:

22. Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են ՀՀՄՍ (Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ) 34-ով սահմանված ժամանակաշրջաններին համապատասխան:

23. Ապահովագրական ընկերությունները հաշվետվությունների ձևերը ավելի մանրամասնելու արդյունքում, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում (ձև 5) նախատեսված հոդվածները մյուս ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու դեպքում, այդ հոդվածները կարող են չարտացոլել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: ՀՀՄՍ 34-ի համաձայն՝ ապահովագրական ընկերությունները միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կարող են ներկայացնել ընտրված բացատրական ծանոթագրություններ:

24. Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմելիս կիրառվում է նույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ինչ տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար՝ հաշվի առնելով հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո և պետք է արտացոլվեն հաջորդ տարեկան ֆինանսական հաշվետվություններում:

Գ Լ ՈՒ Խ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՁԵՎ 1 ԵՎ ՁԵՎ 6)

25. Տարեկան ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (ձև 1) 3-րդ սյունակում լրացվում են 1-ին սյունակում թվարկված հոդվածների մեծությունների՝ հաշվետու տարվա վերջի տվյալները, 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի տվյալները: Միջանկյալ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (ձև 6) 3-րդ սյունակում լրացվում են 1-ին սյունակում թվարկված հոդվածների մեծությունների՝ ընթացիկ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջի տվյալները, 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի տվյալները:

26. 1-ին սյունակում թվարկված հոդվածների մեծությունները հաշվարկվում են ՖՀՄՍ-ների համաձայն: Կից աղյուսակում ներկայացված են 1-ին սյունակում թվարկված մեծությունների հաշվարկը կարգավորող հիմնական ստանդարտները:

Հաշվետվության տողը	**Հիմնական կարգավորող ստանդարտ(ներ)ը**
1.1 Հետաձգված ձեռքբերման ծախսեր	ՖՀՄՍ4, ՀՀՄՍ 39
1.2 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	ՀՀՄՍ16
1.3 Վաճառքի համար մատչելի հիմնական միջոցներ	ՀՀՄՍ 39
1.4 Ածանցյալ գործիքներ	ՀՀՄՍ 39
1.5 Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ ներդրումներ	ՀՀՄՍ 39
1.6 Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	ՀՀՄՍ 39
1.7 Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ	ՖՀՄՍ 5
1.8 Ռեպո համաձայնագրի գծով պարտավորություն	ՀՀՄՍ 39
1.9 Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	ՀՀՄՍ 39
1.10 Վերաապահովագրական ակտիվներ	ՖՀՄՍ 4
1.11 Հետաձգված հարկային ակտիվներ	ՀՀՄՍ 12
1.12 Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	ՖՀՄՍ4
1.13 Ստացվելիք տոկոսներ և շահաբաժիններ	ՀՀՄՍ 39

1.14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	ՀՀՄՄ 7
3.1 Կանոնադրական կապիտալ	Հիմունքներ
3.2 Էմիսիոն եկամուտ	Հիմունքներ
3.3 Չբաշխված շահույթ (վնաս)	Հիմունքներ
3.4 Այլ համապարփակ եկամուտ	Հիմունքներ
3.5 Գլխավոր պահուստ	Հիմունքներ
3.6 Այլ պահուստներ	Հիմունքներ
3.7 Կապիտալի այլ տարրեր	Հիմունքներ
4.1 Չվաստակած ապահովագրավճարների պահուստ	ՖՀՄՄ4
4.2 Պահանջների (վնասների) պահուստ	ՖՀՄՄ4
4.3 Մաթեմատիկական պահուստ	ՖՀՄՄ4
4.4 Այլ ապահովագրական պահուստներ	ՖՀՄՄ4
4.5 Փոխառություններ և ներգրավված վարկեր	ՀՀՄՄ39
4.6 Ածանցյալ գործիքներ	ՀՀՄՄ39
4.7 Ռեպո համաձայնագրի գծով պարտավորություն	ՀՀՄՄ39
4.8 Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ընթացիկ արժեթղթեր	ՀՀՄՄ39
4.9 Այլ ֆինանսական պարտավորություններ	ՀՀՄՄ39
4.10 Հետաձգված հարկային պարտավորություններ	ՀՀՄՄ12
4.11 Ապահովագրական և	ՖՀՄՄ4, ՀՀՄՄ39

վերաապահովագրական պայմանագրերի բաղադրիչներ	
4.12 Ապահովագրության գծով վճարվելիք գումարներ	ՖՀՄՍ4, ՀՀՄՍ39
4.13 Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ	ՖՀՄՍ4, ՀՀՄՍ39
4.14 Այլ վճարվելիք գումարներ	արտացոլվում են այն հոդվածները, որոնք չեն արտացոլվել 4.1-4.13 տողերում, հաշվառումը տարվում է համապատասխան ՖՀՄՍ-ներով:

27. Ձև 1-ի և ձև 6-ի 2-րդ սյունակում լրացվում են 1-ին սյունակում նշված հոդվածների վերաբերյալ տեղեկատվություն բացահայտող ծանոթագրությունների համարները:

28. Ապահովագրական ընկերությունը կարող է մանրամասնել տարեկան և/կամ միջանկյալ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, եթե այդ փոփոխությունը չի հակասում ՖՀՄՍ-ներին և եթե այդ փոփոխությամբ չի խախտում ձև 1-ի և ձև 6-ի 1-ին սյունակի հոդվածների՝ ըստ իրացվելիության դասավորվածության սկզբունքը:

29. Ապահովագրական ընկերությունը կարող է փոխել ձև 1-ի և ձև 6-ի սյունակների և/կամ տողերի անվանումները, եթե այդ փոփոխությունը չի հակասում ՖՀՄՍ-ներին՝ այդ մասին բացահայտելով կից ներկայացվող ծանոթագրություններում և հիմնավորելով փոփոխման անհրաժեշտությունը:

Գ Լ ՈՒ Խ 5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՁԵՎ 2ա, 2բ, 2գ և 7ա, 7բ, 7գ)

30. Տարեկան ֆինանսական արդյունքների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններից յուրաքանչյուրի (ձև 2ա, 2բ, 2գ) 3-րդ սյունակում լրացվում են 1-ին սյունակում թվարկված հոդվածների մեծությունների՝ հաշվետու տարվա վերջի տվյալները, 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի տվյալները: Միջանկյալ ֆինանսական արդյունքների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքների

մասին հաշվետվություններից յուրաքանչյուրի (ձև 7ա, 7բ, 7գ) 3-րդ սյունակում լրացվում են 1-ին սյունակում թվարկված հոդվածների մեծությունների՝ ընթացիկ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջի տվյալները, 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի տվյալները:

31. Տարեկան և միջանկյալ ֆինանսական արդյունքների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններից յուրաքանչյուրի 1-ին սյունակում թվարկված հոդվածների մեծությունները հաշվարկվում են ՖՀՄՍ-ների համաձայն:

32. Կից աղյուսակում ներկայացված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (ձև 2ա, 7ա) 1-ին սյունակում թվարկված մեծությունների հաշվարկը կարգավորող հիմնական ստանդարտները.

Հաշվետվության տողը	**Հիմնական կարգավորող ստանդարտ(ներ)ը/հաշվարկման կարգ**
1.Համախառն ապահովագրավճարներ	ՖՀՄՍ 4
2.Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	ՖՀՄՍ 4
3.Զուտ ապահովագրավճարներ	«1. Համախառն ապահովագրավճարներ»- «2. Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ»
4.Եկամուտներ միջնորդավճարներից	ՀՀՄՄՍ39, ՀՀՄՄՍ18
5.Եկամուտներ ներդրումներից	ՀՀՄՄՍ39, ՀՀՄՄՍ18
6.Իրացված եկամուտներ	ՀՀՄՄՍ39, ՀՀՄՄՍ18
7.Իրական արժեքից օգուտներ և կորուստներ	ՀՀՄՄՍ18
8.Այլ գործառնական եկամուտ	ՀՀՄՄՍ18
9.Այլ եկամուտ	ՀՀՄՄՍ18
10.Ընդամենը եկամուտ	«3.Զուտ ապահովագրավճարներ»+ «4.Եկամուտներ միջնորդավճարներից»+ «5.Եկամուտներ

	ներդրումներից»+ «6.Իրացված եկամուտներ»+ «7.Իրական արժեքից օգուտներ և կորուստներ»+ «8.Այլ գործառնական եկամուտ»
11.Համախառն հատուցումներ	ՖՀՄՍ4
12.Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներ	ՖՀՄՍ4
13.Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում	ՖՀՄՍ4
14.Համախառն փոփոխություններ՝ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնում	ՖՀՄՍ4
15.Զուտ հատուցումներ	«11.Համախառն հատուցումներ»- «12.Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներ»+ «13.Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում»- «14.Համախառն փոփոխություններ՝ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնում»
16.Ֆինանսական ծախսեր	ՀՀՄՍ 39, ՀՀՄՍ 18
17.Այլ գործառնական և վարչական ծախսեր	ՀՀՄՍ18
18.Այլ ծախսեր	ՀՀՄՍ18
19.Ընդամենը հատուցումներ և այլ ծախսեր	«15.Զուտ հատուցումներ»+ «16.Ֆինանսական ծախսեր»+ «17.Այլ գործառնական և վարչական ծախսեր»
20.Շահույթ հարկումից առաջ	«10.Ընդամենը եկամուտ»- «19.Ընդամենը

	հատուցումներ և այլ ծախսեր»
21.Շահութահարկի գծով ծախս	ՀՀՄՄ12
22.Շահույթ հարկումից հետո	«20.Շահույթ հարկումից առաջ»- «21.Շահութահարկի գծով ծախս»

33. Կից աղյուսակում ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (ձև 2բ, 7բ) 1-ին սյունակում թվարկված մեծությունների հաշվարկը կարգավորող հիմնական ստանդարտները:

1. Շահույթ հարկումից հետո	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (ձև 2ա, 7ա) 22-րդ տող
2. Հիմնական միջոցների վերագնահատումից փոփոխություններ	ՀՀՄՄ16
3. Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ	ՀՀՄՄ38/36
4. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասներ	ՀՀՄՄ39
5. Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտ-ների և վնասների արդյունավետ մաս	ՀՀՄՄ39
6. Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող օգուտներ և վնասներ	ՀՀՄՄ39

7. Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ	
8. Այլ համապարփակ եկամտի տարրերի գծով շահութահարկի ծախս	ՀՀՄՍ12
9. Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	«2. Հիմնական միջոցների վերագնահատումից փոփոխություններ»+ «3.Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ»+ «4.Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասներ»+ «5.Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների և վնասների արդյունավետ մաս»+ «6.Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող օգուտներ և վնասներ»+«7. Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ»- «8.Այլ համապարփակ եկամտի տարրերի գծով շահութահարկի ծախս»
10. Ընդամենը համապարփակ եկամուտ հարկումից հետո	«1. Շահույթ հարկումից հետո»+ «9.Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո»

34. Կից աղյուսակում ներկայացված են համապարփակ եկամտի մասին հաշվետվության (ձև 2գ և 7գ) 1-ին սյունակում թվարկված մեծությունների հաշվարկը կարգավորող հիմնական ստանդարտները.

Հաշվետվության տողը	**Հիմնական կարգավորող ստանդարտ(ները/հաշվարկման կարգ)**
1.Համախառն ապահովագրավճարներ	ՖՀՄՍ 4

2.Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	ՖՀՄՍ 4
3.Զուտ ապահովագրավճարներ	«1. Համախառն ապահովագրավճարներ»- «2. Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ»
4.Եկամուտներ միջնորդավճարներից	ՀՀՄՍ39, ՀՀՄՍ18
5.Եկամուտներ ներդրումներից	ՀՀՄՍ39, ՀՀՄՍ18
6.Իրացված եկամուտներ	ՀՀՄՍ39, ՀՀՄՍ18
7.Իրական արժեքից օգուտներ և կորուստներ	ՀՀՄՍ18
8.Այլ գործառնական եկամուտ	ՀՀՄՍ18
9.Այլ եկամուտ	ՀՀՄՍ18
10.Ընդամենը եկամուտ	«3.Զուտ ապահովագրավճարներ»+ «4.Եկամուտներ միջնորդավճարներից»+ «5.Եկամուտներ ներդրումներից»+ «6.Իրացված եկամուտներ»+ «7.Իրական արժեքից օգուտներ և կորուստներ»+ «8.Այլ գործառնական եկամուտ»
11.Համախառն հատուցումներ	ՖՀՄՍ4
12.Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներ	ՖՀՄՍ4
13.Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում	ՖՀՄՍ4
14.Համախառն փոփոխություններ՝ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի	ՖՀՄՍ4

մասնաբաժնում	
15.Զուտ հատուցումներ	«11.Համախառն հատուցումներ»- «12.Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներ»+ «13.Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում»- «14.Համախառն փոփոխություններ՝ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնում»
16.Ֆինանսական ծախսեր	ՀՀՄՄՍ 39, ՀՀՄՄՍ 18
17.Այլ գործառնական և վարչական ծախսեր	ՀՀՄՄՍ18
18.Այլ ծախսեր	ՀՀՄՄՍ18
19.Ընդամենը հատուցումներ և այլ ծախսեր	«15.Զուտ հատուցումներ»+ «16.Ֆինանսական ծախսեր»+ «17.Այլ գործառնական և վարչական ծախսեր»
20.Շահույթ հարկումից առաջ	«10.Ընդամենը եկամուտ»- «19.Ընդամենը հատուցումներ և այլ ծախսեր»
21.Շահութահարկի գծով ծախս	ՀՀՄՄՍ12
22.Շահույթ հարկումից հետո	«20.Շահույթ հարկումից առաջ»- «21.Շահութահարկի գծով ծախս»
23.Հիմնական միջոցների վերագնահատումից փոփոխություններ	ՀՀՄՄՍ16
24.Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ	ՀՀՄՄՍ38/36
25.Վաճառքի համար մատչելի	ՀՀՄՄՍ39

ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասներ	
26.Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների և վնասների արդյունավետ մաս	ՀՀՄՄՍ39
27.Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող օգուտներ և վնասներ	ՀՀՄՄՍ39
28.Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ	
29.Այլ համապարփակ եկամտի տարրերի գծով շահութահարկի ծախս	ՀՀՄՄՍ12
31.Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	«23.Հիմնական միջոցների վերագնահատումից փոփոխություններ»+ «24.Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ»+ «25.Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասներ»+ «26.Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների և վնասների արդյունավետ մաս»+ «27.Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից

	առաջացող օգուտներ և վնասներ»+ «28.Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ»- «29.Այլ համապարփակ եկամտի տարրերի գծով շահութահարկի ծախս»
32.Ընդամենը համապարփակ եկամուտ հարկումից հետո	«22.Շահույթ հարկումից հետո»+ «31.Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո»

35. 1-ին եռամսյակի համար ներկայացվող միջանկյալ ֆինանսական արդյունքների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններից յուրաքանչյուրի (ձև 7ա, 7բ, 7գ) 3-րդ և 5-րդ սյունակները չեն լրացվում և չեն հրապարակվում:

36. Ապահովագրական ընկերությունը կարող է մանրամասնել կամ փոխել ձև 2ա-ի, ձև 2բ-ի, ձև 2գ-ի, ձև 7ա-ի, ձև 7բ-ի և ձև 7գ-ի սյունակների և/կամ տողերի անվանումները, եթե այդ փոփոխությունը չի հակասում ՖՀՄՍ-ներին՝ այդ մասին բացահայտելով կից ներկայացվող ծանոթագրություններում և հիմնավորելով փոփոխման անհրաժեշտությունը:

Գ Լ ՈՒ Խ 6

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՁԵՎ 3 ԵՎ ՁԵՎ 8)

37. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին տարեկան (միջանկյալ) հաշվետվության 1-ից 7-րդ տողերում ցույց են տրվում նախորդ հաշվետու տարվան վերաբերող տվյալները, 8-14-րդ տողերում ցույց են տրվում հաշվետու տարվան վերաբերող տվյալները:

38. Ապահովագրական ընկերությունը կարող է մանրամասնել կամ փոխել ձև 3-ի և ձև 8-ի սյունակների և/կամ տողերի անվանումները, եթե այդ փոփոխությունը չի հակասում ՖՀՄՍ-ներին՝ այդ մասին բացահայտելով կից ներկայացվող ծանոթագրություններում և հիմնավորելով փոփոխման անհրաժեշտությունը:

39. «1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի ————---թ.» տողում ըստ սյուների լրացվում է նախորդ տարվա (ժամանակաշրջանի) դեկտեմբերի 31-ի դրությամբ.

1) 2-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի մնացորդը,

2) 3-րդ սյունակում՝ ապահովագրական ընկերության կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի հաշվեկշռային մնացորդը,

3) 4-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի զուտ գումարը (սյունակ 1-սյունակ 2),

4) 5-րդ սյունակում՝ գլխավոր պահուստի մնացորդը,

5) 6-րդ սյունակում՝ էմիսիոն եկամտի մնացորդը: Էմիսիոն վնասը ցույց է տրվում փակագծերում,

6) 7-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի (վնասի) գումարը (վնասը ցույց է տրվում փակագծերում),

7) 8-րդ սյունակում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները (վնասները),

8) 9-րդ սյունակում՝ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների արդյունավետ մասը,

9) 10-րդ սյունակում՝ օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող օգուտները (վնասները),

10) 11-րդ սյունակում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխությունները,

11) Ձև 3-ի համար՝ 12-րդ սյունակում՝ միջանկյալ շահաբաժինների մնացորդը,

12) Ձև 3-ի համար՝ 13-րդ սյունակում և Ձև 8-ի համար՝ 12-րդ սյունակում՝ որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների և սույն հաշվետվությունում չներառված սեփական կապիտալի այլ տարրերի մնացորդների մեծության հանրագումարը (բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում),

13) Ձև 3-ի համար՝ 14-րդ սյունակում՝ ընդամենը (սյունակ 4 + սյունակ 5 + սյունակ 6 + սյունակ 7 + սյունակ 8 - սյունակ 9 + սյունակ 10 + սյունակ 11 - սյունակ 12 + սյունակ 13):

14) Ձև 8-ի համար՝ 13-րդ սյունակում՝ ընդամենը (սյունակ 4 + սյունակ 5 + սյունակ 6 + սյունակ 7 + սյունակ 8 - սյունակ 9 + սյունակ 10 + սյունակ 11 + սյունակ 12):

40. «1.1. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը» տողում արտացոլվում է ՀՀՄՍ 8՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի մոտեցման համաձայն հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխության հետևանքով հաշվեկշռային արժեքի ճշգրտման մեծությունը՝ ըստ սյուների: Սյուների մեծությունների գումարը գրվում է «Ընդամենը» սյունակում: Բացասական լինելու դեպքում այս գումարը ներկայացվում է փակագծերում:

41. «2. Վերահաշվարկված մնացորդ» տողն արտացոլում է. «1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի ————---
-թ.» տողում և «1.1. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը» տողում արտացոլված մեծությունների գումարը՝ ըստ սյուների:

42. «4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝» տողում լրացվում են.

1) 2-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի ձևավորման, բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետագա թողարկման հետևանքով ու կանոնադրական կապիտալի այլ աճի (սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին) և հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) մարման հետևանքով կապիտալի նվազման տարբերությունը (բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում),

2) 3-րդ սյունակում՝ բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետ գնման հետևանքով ու հետ գնված կապիտալի այլ աճի և հետ գնված բաժնետոմսերի (բաժնեմասերի) վաճառքի, մարման հետևանքով ու հետ գնված կապիտալի այլ նվազման տարբերությունը բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

3) 4-րդ սյունակում՝ 1-ին և 2-րդ սյունակների տարբերությունը (բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում),

4) 5-րդ սյունակում՝ գլխավոր պահուստի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բաժնետոմսերի (սեփականատերերի) հետ այլ գործարքների հետևանքով գլխավոր պահուստի աճի և նվազման տարբերության գումարը,

5) 6-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի ձևավորման, բաժնետոմսերի (բաժնեմասերի) հետագա թողարկման, հետ գնված բաժնետոմսերի վաճառքի, մարման, էմիսիոն եկամտի հաշվին կանոնադրական կապիտալի աճի հետևանքով էմիսիոն եկամտի աճի և նվազման տարբերության գումարը,

6) 7-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բաժնետոմսերի (սեփականատերերի) հետ այլ գործարքների հետևանքով չբաշխված շահույթի աճի և նվազման տարբերության գումարը,

7) 12-րդ սյունակում՝ բաժնետոմսերի (սեփականատերերի) հետ գործարքների հետևանքով սեփական կապիտալի այլ տարրերի փոփոխության գումարը,

8) 11-րդ սյունակում՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ սյունակների հանրագումարը:

43. 3.1, 3.2 տողերում ներառված են 3-րդ տողում արտացոլված գումարների բացվածքը՝ ըստ կանոնադրական կապիտալի աճի և նվազման: Հաշվետվությունը կազմելիս կարող են բացվել տվյալ ապահովագրական ընկերության համար էական այլ հոդվածների համար լրացուցիչ տողեր՝ լրացնելով հոդվածի անվանումը և գումարը:

44. «4. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)» տողի 7-րդ և 13-րդ սյունակներում ցույց է տրվում նախորդ տարվա զուտ շահույթի (վնաս) հետևանքով չբաշխված շահույթի փոփոխության գումարը:

45. «5. ներքին շարժեր, այդ թվում՝» տողում ցույց է տրվում.

1) 5-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի հաշվին գլխավոր պահուստի աճի և էմիսիոն վնասի ու կուտակված ծածկման նպատակով կատարված հատկացումների հետևանքով գլխավոր պահուստի նվազման տարբերությունը: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

2) 6-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի, գլխավոր պահուստի, ինչպես նաև սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին էմիսիոն վնասի ծածկման հետևանքով էմիսիոն վնասի նվազման գումարը,

3) 7-րդ սյունակում՝ վերագնահատումներից արժեքի աճի՝ չբաշխված շահույթին վերագրման, գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասների ծածկման հետևանքով չբաշխված շահույթի աճի (կուտակված վնասների նվազման) և էմիսիոն վնասների ծածկման, գլխավոր պահուստին կատարված հատկացումների հետևանքով չբաշխված շահույթի նվազման տարբերությունը, ինչպես նաև սեփական կապիտալի այլ տարրերի հետ չբաշխված շահույթի թղթակցության գումարը: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

4) 8-11-րդ սյունակներում՝ չբաշխված շահույթին վերագրման հետևանքով վերագնահատումից արժեքի աճի նվազման գումարները,

5) 11-րդ սյունակում՝ սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժի գումարը,

6) 13-րդ սյունակում՝ 5-րդ, 8-11-րդ և 12-րդ սյունակների հանրագումարը:

46. 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5 տողերում ներառված են 8-րդ տողում արտացոլված գումարների առավել էական հոդվածները: Հաշվետվությունը կազմելիս կարող են բացվել տվյալ ապահովագրական ընկերության համար էական այլ հոդվածների համար լրացուցիչ տողեր՝ լրացնելով հոդվածի անվանումը և գումարը:

47. «6. Բաշխված շահաբաժիններ» տողում ցույց է տրվում.

1) 5-րդ սյունակում՝ շահութաբաժինների (արտոնյալ բաժնետոմսերի գծով) հայտարարման հետևանքով գլխավոր պահուստի նվազման գումարը,

2) 7-րդ սյունակում՝ շահութաբաժինների հայտարարման հետևանքով չբաշխված շահույթի նվազման գումարը,

3) 12-րդ սյունակում՝ 5-րդ ու 7-րդ սյունակների հանրագումարը:

48. 9-րդ տողը լրացվում է «1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի ————----թ. (ստուգված/չստուգված)» տողին համանման:

49. 2-րդ աղյուսակը լրացվում է 1-ին աղյուսակի լրացման նմանությամբ:

Գ Լ ՈՒ Խ 7

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՈՒՂՂԱԿԻ ՄԵԹՈԴ) (ՁԵՎ 4ա ԵՎ ՁԵՎ 9ա)

50. ՖՀՄՍ7-ի համաձայն ուղղակի մեթոդով կազմվող դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությամբ ներկայացվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական տեսակները: Այն արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանում ապահովագրական ընկերության դրամարկղում և բանկային հաշիվներում գործառնական, ներդրումային, ֆինանսական գործունեությունից (ներառյալ՝ արտասովոր դեպքերից) Հայաստանի Հանրապետության արժույթի և արտարժույթի, դրամական միջոցների համարժեքների (այսուհետ՝ դրամական միջոցներ) մուտքերը և ելքերը, հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի մնացորդները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքային տարբերությունների հետևանքով դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների աճը կամ նվազումը:

51. «Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից» բաժնում արտացոլվում են ապահովագրական ընկերության հիմնական գործունեության, ինչպես նաև այլ գործունեության, բացառությամբ՝ ներդրումային և ֆինանսական գործունեության հետ կապված դրամական միջոցների զուտ հոսքերը:

52. «Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից» բաժնում արտացոլվում են երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումից առաջացած զուտ հոսքերը, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ:

53. «Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից» բաժնում արտացոլվում են այն գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքերը, որի հետևանքով տեղի են ունենում ապահովագրական ընկերության սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ:

54. Դրամական միջոցների հոսքերը, որոնք առաջացել են արտարժույթով կատարված գործառնությունների հետևանքով, ներկայացվում են ապահովագրական ընկերության հաշվետվական արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով հաշվետվական արժույթի և արտարժույթի միջև դրամական միջոցների հոսքերի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը:

55. Դրամական հոսքերի տարեկան հաշվետվության 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Եթե ապահովագրական ընկերությունը կազմում է միջանկյալ հաշվետվություն, ապա 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը և նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանների տվյալները:

56. «Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը» տողում ներկայացվում է դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը:

57. Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր

1) «Ստացված ապահովագրավճար» տողում ներկայացվում է ուղղակի ապահովագրության և համաապահովագրության պայմանագրերով, ինչպես նաև վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ստացված դրամական միջոցների (ապահովագրավճարների) գումարը:

2) «Վերաապահովագրական գործունեությունից ստացված մուտքեր» տողում ներկայացվում են վերաապահովագրությանը փոխանցված ռիսկերի գծով ստացված դրամական միջոցները:

3) «Գործառնական այլ գործունեությունից մուտքեր» տողում ներկայացվում է նյութերի, արագամաշ առարկաների իրացումից, վարձավճարներից, դրամական միջոցների համարժեքներ հանդիսացող ներդրումներից ստացված տոկոսներից, տույժերից, տուգանքներից, դուրս գրված դեբիտորական պարտքերի մարումից, նյութական վնասի փոխհատուցումից, արտասովոր դեպքերից, անհատույց ստացված դրամական միջոցների գումարը, ինչպես նաև գործառնական այլ գործունեությունից ստացված դրամական միջոցների գումարը:

4) «Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր» տողում ներկայացվում է գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հանրագումարը:

58. Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր

1) «Վճարված ապահովագրական հատուցումներ (ապահովագրական գումարներ)» տողում ներկայացվում են ընկերության կողմից կյանքի և ոչ կյանքի ապահովագրության գծով իրականացրած ապահովագրական հատուցումների, ինչպես նաև ապահովագրական գումարների վճարման նպատակով ելքագրված դրամական միջոցները:

2) «Փոխանցված վերաապահովագրավճարներ» տողում ներկայացվում են ընկերության կողմից վերաապահովագրությանը փոխանցված ռիսկերի գծով ելքագրված դրամական միջոցները:

3) «Կանխարգելիչ միջոցառումների նպատակով ծախսեր» տողում ներկայացվում են դժբախտ դեպքերի, աղետների և այլնի կանխարգելման միջոցառումների ֆինանսավորման նպատակով ընկերության կողմից տրված դրամական միջոցները:

4) «Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից» տողում ներկայացվում են ընկերության աշխատակիցներին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, աշխատողների պարտադիր սոցիալական ապահովագրության հիմնադրամին ելքագրված դրամական միջոցները ներառյալ դրանց գծով վճարված տույժերն ու տուգանքները:

5) «Առհաշիվ տրված գումարներ» տողում ներկայացվում են ընկերության գործունեության իրականացման նպատակով աշխատակիցներին տրամադրված դրամական միջոցների ելքերը:

6) «Վճարումներ բյուջե» տողում ներկայացվում է ընկերության կողմից հարկերի, տուրքերի, դրանց դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների և բյուջե գանձվող այլ վճարների գծով վճարված դրամական միջոցների գումարը:

7) «Գործառնական այլ գործունեությունից ելքեր» տողում ներկայացվում է գործառնական այլ գործունեության նպատակով վճարված դրամական միջոցների գումարը:

8) «Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր» տողում ներկայացվում է գործառնական գործունեության հետ կապված դրամական միջոցների ելքերի հանրագումարը:

59. «Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր» տողում ներկայացվում է գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքերի և ելքերի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

60. Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր

1) «Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից» տողում ներկայացվում է ընկերության կողմից ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների օտարումից առաջացած դրամական միջոցների ներհոսքը:

2) «Ֆինանսական ակտիվներով գործառնություններից» տողում ներկայացվում է այլ անձանց սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր), այլ անձանց պարտքային արժեթղթերի (պարտատոմսեր, մուրհակներ) վաճառքներից, այլ անձանց տրամադրված փոխառությունների մարումից, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի մարումից ստացված դրամական միջոցների գումարը (այն գործիքները, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեքներ կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով, սույն հոդվածում չեն ներառվում):

3) «Շահաբաժինների և տոկոսների ստացումից» տողում ներկայացվում են ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորներում, դուստր կազմակերպություններում կատարված ներդրումների դիմաց ստացված շահաբաժինները և փոխառությունների, ֆինանսական ակտիվների, ընթացիկ և ոչ ընթացիկ ներդրումների գծով ստացված տոկոսները:

4) «Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր» տողում ներկայացվում է ներդրումային այլ գործունեությունից ստացված դրամական միջոցների գումարը:

5) «Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր» տողում ներկայացվում է ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքերի հանրագումարը:

61. Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր

1) «Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով» տողում ներկայացվում է ընկերության կողմից ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման կամ կառուցման համար վճարված դրամական միջոցների արտահոսքը:

2) «Ֆինանսական ակտիվների ձեռքբերումից և փոխառությունների տրամադրումից» տողում ներկայացվում է այլ անձանց սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր), այլ անձանց պարտքային արժեթղթերի ձեռքբերման համար, այլ անձանց փոխառությունների տրամադրումից դրամական միջոցների ելքերի գումարը (այն գործիքները, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեքներ կամ պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով, սույն հոդվածում չեն ներառվում):

3) «Ներդրումային այլ գործունեությունից ելքեր» տողում ներկայացվում է ներդրումային այլ գործունեության նպատակով վճարված դրամական միջոցների գումարը:

4) «Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր» տողում ներկայացվում է ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքերի հանրագումարը:

62. «Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր» տողում ներկայացվում է ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքերի և ելքերի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

63. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր

1) «Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից» տողում ներկայացվում է ընկերության կողմից թողարկված (հետ գնված) սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր) վաճառքից (վերավաճառքից) ստացված դրամական միջոցների գումարը:

2) «Ստացված վարկերից և փոխառություններից» տողում ներկայացվում է այլ ընկերություններից ստացված վարկերից և փոխառություններից դրամական միջոցների մուտքերի գումարը:

3) «Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր» տողում ներկայացվում են ֆինանսական այլ գործունեությունից ստացված դրամական միջոցների մուտքերը:

4) «Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր» տողում ներկայացվում է ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքերի հանրագումարը:

64. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր

1) «Ստացված վարկերի և փոխառությունների մարումից» տողում ներկայացվում է ստացված վարկերի և փոխառությունների, թողարկված պարտքային արժեթղթերի, ֆինանսական վարձակալության գծով կրեդիտորական պարտքի մարման համար վճարված դրամական միջոցների գումարը:

2) «Վճարված շահաբաժիններ և տոկոսներ» տողում ներկայացվում են ապահովագրական ընկերության կողմից բաժնետերերին վճարված շահաբաժինների գումարները և ներգրաված միջոցների դիմաց վճարված տոկոսները (ներառյալ՝ ֆինանսական վարձակալության գծով վճարվածները):

4) սեփական կապիտալից ժամանակաշրջանի շահույթ կամ վնասում վերադասակարգված գումարը՝ ցույց տալով համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության յուրաքանչյուր տողային հոդվածում ներառված գումարը,

5) այն գումարը, որը ժամանակաշրջանի ընթացքում հանվել է սեփական կապիտալից և ներառվել է այնպիսի ոչ ֆինանսական ակտիվի կամ ոչ ֆինանսական պարտավորության ինքնարժեքում կամ այլ հաշվեկշռային արժեքում, որի ձեռք բերումը կամ ստանձնելը հանդիսացել է հեջավորված մեծապես հավանական կանխատեսվող գործարք:

Ծանոթագրություն 24-ը պետք է ներառի նաև.

1) իրական արժեքի հեջերի համար օգուտը կամ կորուստները՝

ա. հեջավորման գործիքի գծով,

բ. հեջավորվող ռիսկին վերագրելի հեջավորված հոդվածից:

2) շահույթում կամ վնասում ճանաչված անարդյունավետությունը, որն առաջանում է դրամական հոսքերի հեջից,

3) շահույթում կամ վնասում ճանաչված անարդյունավետությունը, որն առաջանում է արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջից:

Ծանոթագրություն 25. «Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ և ֆինանսական գործիքների իրական արժեքներ»

Ծանոթագրություն 25-ի ներքո Ընկերությունը ներկայացնում է հետևյալ աղյուսակը և բացահայտում իրական արժեքի հաշվարկման՝ իր կողմից կիրառած մեթոդաբանությունը:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կատեգորիաներ	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	
	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք	Հաշվե-կշռային արժեք	Իրական արժեք

«իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ				
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,				
Փոխառություններ և դեբիտորական պարտքեր,				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,				
«իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորություններ				
ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:				

Ծանոթագրություն 26. «Վերաապահովագրական ակտիվներ»

Ծանոթագրություն 26-ի ներքո Ընկերությունը բացահայտում է հետևյալ տեղեկատվությունը.

1) վերաապահովագրության ձեռքբերման արդյունքում շահույթում կամ վնասում ճանաչված շահույթները կամ վնասները.

2) եթե Ընկերությունը հետաձգում և ամորտիզացնում է վերաապահովագրության ձեռքբերման արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը, ապա այդ ժամանակաշրջանի ամորտիզացիան և ժամանակաշրջանի սկզբին ու վերջին չամորտիզացված մնացած գումարները:

Ծանոթագրություն 27. «Հարկում»

Ծանոթագրություն 27-ի ներքո անհրաժեշտ է բացահայտել հարկերի գծով ծախսի (եկամտի) խոշոր բաղադրիչները՝ առանձին-առանձին, ինչպես նաև.

1) ընթացիկ և հետաձգված հարկերի համախառն գումարը՝ կապված ուղղակիորեն սեփական կապիտալին դեբետագրված կամ կրեդիտագրված հոդվածների հետ,

2) հարկի գծով ծախսի (եկամտի) և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածության բացատրությունը՝ հետևյալ երկու եղանակներից մեկի կամ երկուսի միջոցով՝

ա. հարկի գծով ծախսի (եկամտի) և հաշվապահական շահույթի ու հարկի կիրառվող դրույքի (դրույքների) արտադրյալի թվային համադրում՝ բացահայտելով նաև հարկի կիրառվող դրույքը (դրույքները) հաշվարկելու հիմքերը. կամ

բ. հարկի միջին արդյունավետ դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում՝ բացահայտելով նաև հարկի կիրառվող դրույքը (դրույքները) հաշվարկելու հիմքերը.

3) նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ հարկի կիրառվող դրույքի (դրույքների) փոփոխությունների բացատրությունը.

4) նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի գումարները (և ուժի մեջ լինելու ժամկետները, եթե կան այդպիսի ժամկետներ), որոնց գծով հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում.

5) դուստր կազմակերպություններում, մասնաճյուղերում ու ասոցիացված կազմակերպություններում ներդրումների և համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ կապված ժամանակավոր տարբերությունների համախառն գումարը, որոնց գծով հետաձգված հարկային պարտավորություններ չեն ճանաչվել.

6) ժամանակավոր տարբերության յուրաքանչյուր տեսակի և չօգտագործված հարկային վնասների ու չօգտագործված հարկային զեղչերի յուրաքանչյուր տեսակի գծով՝

ա. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների գումարը՝ ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար.

բ. շահույթում կամ վնասում ճանաչված հետաձգված հարկի գծով ծախսի կամ եկամտի գումարը, եթե այն հստակորեն չի երևում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված գումարների փոփոխություններից.

7) ընդհատված գործառնությունների հետ կապված հարկի գծով ծախսը, որը վերաբերում է՝

ա. ընդհատումից առաջացող շահույթին կամ վնասին.

բ. տվյալ ժամանակաշրջանում ընդհատված գործառնության գծով սովորական գործունեությունից շահույթին կամ վնասին՝ յուրաքանչյուր ներկայացված նախորդ ժամանակաշրջանի համապատասխան գումարների հետ միասին.

8) Ընկերության բաժնետերերին տրված այն շահաբաժինների շահութահարկային հետևանքները, որոնք առաջարկվել կամ հայտարարվել են նախքան ֆինանսական հաշվետվությունները ներկայացման համար հաստատելը, բայց ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չեն ճանաչվել որպես պարտավորություն.

9) եթե բիզնեսների միավորման արդյունքում Ընկերությունը հանդիսանում է ձեռք բերող, փոփոխում է իր մինչձեռքբերումային հետաձգված հարկային ակտիվի գծով ճանաչված գումարը.

10) եթե բիզնեսների միավորումում ձեռք բերված հետաձգված հարկային օգուտները չեն ճանաչվել ձեռքբերման ամսաթվին, սակայն ճանաչվել են դրանից հետո, ապա այն դեպքի կամ հանգամանքների փոփոխության նկարագրությունը, որոնք հանգեցրել են հետաձգված հարկային օգուտների ճանաչմանը:

Ծանոթագրություն 28. «Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ»
Ծանոթագրություն 28-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

	Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ապահովադիրներից		
Վերաապահովագրողներից		
Միջնորդներից		
Ընդամենը		

Ծանոթագրություն 29. «Հետաձգված ծախսեր»
Ծանոթագրություն 29-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

	Հետաձգված ծախսեր
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	
Հետաձգված ծախսեր	
Ամորտիզացիա	
Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	
Հետաձգված ծախսեր	
Ամորտիզացիա	
Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	

Ծանոթագրություն 30. «Հաշվեգրված եկամուտ»
Ծանոթագրություն 30-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

Հաշվեգրված եկամտի տեսակ	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

Ծանոթագրություն 31. -«Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորություններ»
Ծանոթագրություն 31-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

Ապահովագրական պայմանագրերի հետ կապված պարտավորության աղբյուր	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

Ծանոթագրություն 32. «Փոխառություններ»

Ծանոթագրություն 32-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

Փոխառության աղբյուր	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

Ծանոթագրություն 33. «Այլ ֆինանսական պարտավորություններ»

Ծանոթագրություն 33-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

Այլ ֆինանսական պարտավորության աղբյուր	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

Ծանոթագրություն 34. «Կրեդիտորական պարտավորություններ ապահովագրության գծով»

Ծանոթագրություն 34-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

Կրեդիտորական պարտավորություններ ըստ ապահովագրության դասերի	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

Ծանոթագրություն 35. «Այլ պարտավորություններ»

Ծանոթագրություն 35-ը ներառում է հետևյալ աղյուսակը.

Այլ պարտավորության	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

աղբյուր		

Ծանոթագրություն 36. «Կապիտալ»

Ծանոթագրություն 36-ի ներքո անհրաժեշտ է բացահայտել.

1) կապիտալի յուրաքանչյուր դասի գծով՝

ա. բաժնետոմսերի հայտարարված քանակը.

բ. թողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի, ինչպես նաև թողարկված, սակայն լրիվ չվճարված բաժնետոմսերի քանակը.

գ. բաժնետոմսերի անվանական արժեքը, կամ նշում այն մասին, որ բաժնետոմսերը չունեն անվանական արժեք.

դ. ժամանակաշրջանի սկզբի և ժամանակաշրջանի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի քանակի համադրում.

ե. տվյալ դասի հետ կապված իրավունքները, արտոնությունները և սահմանափակումները, ներառյալ շահաբաժինների բաշխման և սեփական կապիտալի փոխ-հատուցման սահմանափակումը.

զ. կազմակերպության բաժնետոմսերը, որոնք պահվում են իր իսկ (կազմակերպության) կողմից, կամ իր դուստր կազմակերպությունների, կամ ասոցիացված կազմակերպությունների կողմից.

է. օպցիոն և վաճառքի պայմանագրերով թողարկման համար պահուստավորված բաժնետոմսերը, ներառյալ ժամկետները և գումարները.

ը. սեփական կապիտալում յուրաքանչյուր պահուստի բնույթի և նպատակի նկարագրությունը:

Ծանոթագրություն 37. «Ռիսկերի կառավարման հիմունքներ»

Ֆինանսական գործիքներից առաջացող յուրաքանչյուր տեսակի ռիսկի համար Ծանոթագրություն 37-ի ներքո Ընկերությունը պետք է բացահայտի.

1) ռիսկին ենթարկվածությունը և այն, թե ինչպես է դա առաջանում,

2) ռիսկի կառավարման իր նպատակները, քաղաքականությունը և ընթացակարգերը, ինչպես նաև ռիսկի չափման համար օգտագործվող մեթոդները,

3) Ընկերության կողմից կառավարվող կապիտալի վերաբերյալ քանակական ամփոփ ցուցանիշներ,

4) Նշվածների փոփոխությունները նախորդ ժամանակաշրջանի համեմատ:

Ծանոթագրություն 38. «Ապահովագրական ռիսկեր»

Ծանոթագրություն 38-ի ներքո անհրաժեշտ է բացահայտել տեղեկատվություն, որը հնարավորություն կտա գնահատելու ապահովագրության պայմանագրերից առաջացող ռիսկերի բնույթը և չափը: Մասնավորապես, Ընկերությունը պետք է բացահայտի՝

1) ապահովագրության պայմանագրերից առաջացող ռիսկերի կառավարման իր նպատակները, քաղաքականությունը և գործընթացները և այդ ռիսկերի կառավարման նպատակով օգտագործվող մեթոդները.

2) տեղեկատվություն ապահովագրական ռիսկի (նախքան վերաապահովագրության արդյունքում ռիսկի նվազեցումը և դրանից հետո) վերաբերյալ, ներառյալ տեղեկատվություն՝

ա. ապահովագրական ռիսկի նկատմամբ զգայունության վերաբերյալ, որը կարող է լինել.

1. որակական տեղեկատվություն զգայունության վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն Ընկերության ապագա դրամական միջոցների հոսքերի մեծության, ժամկետների և անորոշության վրա էական ազդեցություն ունեցող ապահովագրության պայմանագրերի ժամկետների և պայմանների վերաբերյալ, կամ

2. զգայունության վերլուծություն, որը ցույց է տալիս, թե ինչպիսի ազդեցություն կլիներ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի վրա, եթե տեղի ունեցած լինեին՝ համապատասխան ռիսկային փոփոխականի փոփոխություններ, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ավարտին խելամտորեն հնարավոր էին, զգայունության վերլուծության պատրաստման ժամանակ կիրառված մեթոդներն ու ենթադրությունները, ինչպես նաև նախորդ ժամանակաշրջանի համար կիրառվող մեթոդների և ենթադրությունների փոփոխությունները:

Այնուամենայնիվ, եթե Ընկերությունը օգտագործում է շուկայական պայմանների նկատմամբ զգայունությունը կառավարելու այլընտրանքային մեթոդ, ինչպիսին է, օրինակ, պարունակվող արժեքի վերլուծությունը, նա կարող է բավարարել այս պահանջը՝ բացահայտելով այդ այլընտրանքային զգայունության վերլուծությունը, այդպիսի զգայունության վերլուծություն պատրաստելիս օգտագործված մեթոդի և տրամադրված տվյալների հիմքում ընկած հիմնական պարամետրերի ու ենթադրությունների բացատրությունը, ինչպես նաև օգտագործված մեթոդի նպատակի և այն սահմանափակումների բացատրությունը, որոնք կարող են արդյունքում հանգեցնել այնպիսի տեղեկատվության, որն ամբողջովին չի արտացոլում համապատասխան ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը:

բ. ապահովագրական ռիսկի կենտրոնացվածությունների վերաբերյալ, ներառյալ նկարագրություն, թե ինչպես է ղեկավարությունը որոշում այդ կենտրոնացվածությունները և այն ընդհանուր հատկանիշների նկարագրությունը, որը որոշում է յուրաքանչյուր կենտրոնացվածությունը (օրինակ՝ ապահովագրական դեպքի տեսակը, աշխարհագրական վայրը կամ արժույթը).

գ. փաստացի պահանջների վերաբերյալ՝ համեմատած նախկին գնահատականների հետ (այսինքն՝ պահանջների զարգացման ընթացքը): Պահանջների զարգացման ընթացքի բացահայտումը պետք է ներկայացվի՝ սկսած անցյալում այն ժամանակաշրջանից, երբ առաջացել է ամենավաղ էական պահանջը, որի համար պահանջների դիմաց վճարների գումարի և ժամկետի առումով դեռևս առկա է անորոշություն, սակայն չի պահանջվում, որ այն ընդգրկի ավելի, քան տասը տարի: Ապահովագրողից չի պահանջվում բացահայտել տեղեկատվություն այն պահանջների վերաբերյալ, որոնց վճարման գումարի և ժամկետի վերաբերյալ անորոշությունը սովորաբար վերանում է մեկ տարվա ընթացքում.

3) տեղեկատվություն հիմնական ապահովագրության պայմանագրում պարունակվող ածանցյալ գործիքներից առաջացող շուկայական ռիսկին ենթարկվածությունների վերաբերյալ, եթե ապահովագրողից չի պահանջվում, և նա չի չափում պարունակվող ածանցյալ գործիքներն իրական արժեքով:

Ծանոթագրություն 39. «Ֆինանսական ռիսկեր»

Ծանոթագրություն 39-ի ներքո անհրաժեշտ է բացահայտել տեղեկատվություն, որը հնարավորություն կտա գնահատելու ֆինանսական գործիքներից (այդ թվում՝ ապահովագրական պայամանգրերից) առաջացող ռիսկերի բնույթը և չափը, որոնց ենթակա է Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Բացահայտվող տեղեկատվության խմբերն են.

1) իրացվելիության ռիսկ,

2) շուկայական ռիսկ,

3) վարկային ռիսկ:

Մասնավորապես, իրացվելիության ռիսկի գծով Ընկերությունը պետք է բացահայտի՝

1) ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների (ներառյալ թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերի) մարման ժամկետների վերլուծություն, որը ցույց է տալիս պայմանագրային մնացյալ մարման ժամկետները (բացառությամբ եթե դրա փոխարեն նա բացահայտում է տեղեկատվություն ճանաչված ապահովագրական պարտավորություններից առաջացող զուտ դրամական արտահոսքերի գնահատված ժամկետների վերաբերյալ),

2) ածանցյալ ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն: Մարման ժամկետների վերլուծությունը պետք է ներառի այն ածանցյալ ֆինանսական պարտավորությունների պայմանագրային մարման մնացյալ ժամկետները, որոնց համար պայմանագրային մարման ժամկետներն էական են՝ դրամական հոսքերի ժամկետները հասկանալու համար

3) նկարագրություն, թե ինչպես է նա կառավարում 1 և 2 կետերում նշվածներին ներհատուկ իրացվելիության ռիսկը:

Շուկայական ռիսկի գծով Ընկերությունը պետք է բացահայտի.

1) շուկայական ռիսկի զգայունության վերլուծություն յուրաքանչյուր գործիքի տեսակի գծով՝ ցույց տալով, թե շահույթ կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա ինչպես կազդեին ռիսկային փոփոխականի՝ այդ ամսաթվի դրությամբ ողջամտորեն հնարավոր փոփոխությունները.

2) զգայունության վերլուծությունը պատրաստելիս օգտագործված մեթոդները և ենթադրությունները, և

3) նախորդ ժամանակաշրջանի համեմատ օգտագործված մեթոդների և ենթադրությունների փոփոխությունները և այդ փոփոխությունների պատճառները:

Եթե Ընկերությունը կատարում է զգայունության այնպիսի վերլուծություն, ինչպիսին է, օրինակ, ռիսկին ենթակա արժեքը (VaR), որն արտացոլում է ռիսկային փոփոխականների (օրինակ՝ տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքների) փոխկապակցվածությունը, և այն

օգտագործում է ֆինանսական ռիսկերը կառավարելու նպատակով, ապա Ընկերությունը կարող է օգտագործել զգայունության այդ վերլուծությունը՝ շուկայական ռիսկի վերոնշյալ վերլուծության փոխարեն: Այս պարագայում Ընկերությունը պետք է բացահայտի նաև.

4) այդպիսի զգայունության վերլուծություն պատրաստելիս օգտագործված մեթոդի և տրամադրված տվյալների հիմքում ընկած հիմնական պարամետրերի ու ենթադրությունների բացատրությունը, և

5) օգտագործված մեթոդի նպատակի և այն սահմանափակումների բացատրությունը, որոնք կարող են արդյունքում հանգեցնել այնպիսի տեղեկատվության, որն ամբողջովին չի արտացոլում համապատասխան ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը:

Եթե բացահայտված զգայունության վերլուծությունը չի ներկայացնում ֆինանսական գործիքին ներհատուկ ռիսկը (օրինակ, այն պատճառով, որ տարեվերջի դրությամբ ռիսկին ենթարկվածությունը չի արտացոլում տարվա ընթացքում ռիսկին ենթարկվածությունը), ապա Ընկերությունը պետք է բացահայտի այդ փաստը, ինչպես նաև պատճառները, որոնց հիման վրա նա ենթադրում է, որ զգայունության վերլուծությունը չի ներկայացնում ռիսկերը:

Վարկային ռիսկի գծով Ընկերությունը պետք է ըստ ֆինանսական գործիքների

խմբերի բացահայտի.

1) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իր պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը լավագույնս ներկայացնող գումարը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները,

2) 1 կետում բացահայտված գումարի գծով՝ որպես ապահովություն պահվող գրավի կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցների նկարագրությունը,

3) տեղեկատվություն այն ֆինանսական ակտիվների՝ վարկային ռիսկի առումով որակի մասին, որոնք ոչ ժամկետանց են և ոչ արժեզրկված, և

4) այն ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը, որոնց պայմանները վերանայվել են, և որոնք այլապես ժամկետանց կամ արժեզրկված կլինեին:

Ընկերությունը պետք է ըստ ֆինանսական ակտիվների խմբերի բացահայտի նաև

1) այն ֆինանսական ակտիվների ժամկետների (կյանքի տևողության) վերլուծությունը, որոնք հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ժամկետանց են, բայց արժեզրկված չեն,

2) այն ֆինանսական ակտիվների վերլուծությունը, որոնք անհատապես որոշվել են որպես արժեզրկված հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ներառյալ այն գործոնները, որոնք հաշվի են առնվել կազմակերպության կողմից, երբ որոշվել է, որ դրանք արժեզրկված են, և

3) 1 և 2 կետերում բացահայտված գումարների գծով, որպես ապահովություն պահվող գրավի և պարտքի որակի բարելավման այլ միջոցների նկարագրությունը և, եթե դա հնարավոր է, նրանց իրական արժեքի գնահատականը:

Եթե Ընկերությունը, իր կողմից որպես ապահովություն պահվող գրավի նկատմամբ սեփականություն ձեռք բերելով կամ պարտքի բարելավման առկա այլ միջոցներից (օր.՝ երաշխիքից) օգտվելով, ժամանակաշրջանի ընթացքում ձեռք է բերում ֆինանսական կամ ոչ ֆինանսական ակտիվներ, և այդ ակտիվները բավարարում են այլ ստանդարտներով սահմանված ճանաչման չափանիշներին, Ընկերությունը պետք է բացահայտի.

1) ձեռք բերած ակտիվների բնույթը և հաշվեկշռային արժեքը, և

2) եթե ակտիվները հեշտորեն փոխարկելի չեն դրամական միջոցների, այդպիսի ակտիվների օտարման կամ իր գործունեությունում օգտագործման քաղաքականությունը:

Ծանոթագրություն 40. «Պայմանական պարտավորություններ և ակտիվներ»

Ծանոթագրություն 40-ում Ընկերությունը պետք է բացահայտի՝

1) պայմանական պարտավորության և ակտիվի բնույթի համառոտ նկարագրությունը, ինչպես նաև, երբ իրագործելի է՝

ա. դրա ֆինանսական հետևանքի գնահատականը,

բ. անորոշությունների հայտանիշները, որոնք վերաբերում են ցանկացած արտահոսքի կամ ներհոսքի գումարին կամ ժամկետին,

գ. ցանկացած փոխհատուցման հնարավորությունը:

2) վարձատուի վարձակալական համաձայնագրերի ընդհանուր նկարագրությունը,

3) վարձակալի նշանակալի վարձակալական համաձայնագրերի ընդհանուր նկարագրությունը:

Ծանոթագրություն 41. «Բացահայտումներ փոխկապակցված անձանց հետ կապված»

Ծանոթագրություն 41-ում Ընկերությունը պետք է բացահայտի կապակցված կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև տեղեկատվություն գործարքների և չմարված մնացորդների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են՝ ֆինանսական հաշվետվությունների վրա այդ հարաբերությունների հնարավոր ազդեցությունը հասկանալու համար: Բացահայտումները պետք է առնվազն ներառեն՝

1) գործարքների գումարը,

2) չմարված մնացորդների գումարը,

3) չմարված մնացորդների ժամկետներն ու պայմանները, ներառյալ դրանց ապահովված լինելը և մարման համար վճարվելիք հատուցման բնույթը,

4) ցանկացած ստացված կամ տրված երաշխիքի վերաբերյալ մանրամասներ,

5) չմարված մնացորդների գումարի հետ կապված կասկածելի պարտքերի պահուստները,

6) ժամանակաշրջանի ընթացքում ճանաչված ծախսերը կապակցված կողմերից ստացվելիք անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով:

Ընդ որում, վերոնշյալ բացահայտումները հետևյալ կատեգորիաներից յուրաքանչյուրի համար պետք է կատարվեն առանձին՝

ա. մայր կազմակերպություն.

բ. կազմակերպության նկատմամբ համատեղ վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություններ.
գ. դուստր կազմակերպություններ.
դ. ասոցիացված կազմակերպություններ.
ե. համատեղ ձեռնարկումներ, որտեղ կազմակերպությունը ձեռնարկող է.
զ. կազմակերպության կամ իր մայր կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմը.
է. այլ կապակցված կողմեր:

Ծանոթագրություն 42. «Հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր»

Ծանոթագրություն 42-ում Ընկերությունը պետք է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող և չճշգրտող դեպքի յուրաքանչյուր էական դասի մասին բացահայտի հետևյալը՝

ա) դեպքի բնույթը,

բ) դրա ֆինանսական հետևանքի գնահատումը կամ այդպիսի գնահատում կատարելու անհնարինության մասին հայտարարությունը:

Հավելված 9
«Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ (Ձև 6)

_____

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանա-կաշրջան	Նախորդ ժամանակա-շրջան
1		2	3	4
1	***ԱԿՏԻՎՆԵՐ***			
1.1	Հետաձգված ձեռքբերման ծախսեր			
1.2	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ			
1.3	Վաճառքի համար մատչելի հիմնական միջոցներ			
1.4	Աճանցյալ գործիքներ			
1.5	Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ ներդրումներ			
1.6	Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ			
1.7	Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
1.8	Ռեպո համաձայնագրի գծով պարտավորություն			
1.9	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ			
1.10	Վերաապահովագրական ակտիվներ			
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ			
1.12	Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ			
1.13	Ստացվելիք տոկոսներ և շահաբաժիններ			
1.14	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			
2	***ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ***			
3	***Կապիտալ***			
3.1	Կանոնադրական կապիտալ			
3.2	Էմիսիոն եկամուտ			

3.3	Չբաշխված շահույթ (վնաս)			
3.4	Այլ համապարփակ եկամուտ			
3.5	Գլխավոր պահուստ			
3.6	Այլ պահուստներ			
3.7	Կապիտալի այլ տարրեր			
3.8	Ընդամենը կապիտալ			
5	***Պարտավորություններ***			
5.1	Չվաստակած ապահովագրավճարների պահուստ			
5.2	Պահանջների (վնասների) պահուստ			
5.3	Մաթեմատիկական պահուստ			
5.4	Այլ ապահովագրական պահուստներ			
5.5	Փոխառություններ և ներգրավված վարկեր			
5.6	Ածանցյալ գործիքներ			
5.7	Ռեպո համաձայնագրի գծով պարտավորություն			
5.8	Ապահովագրական ընկերության կողմից թողարկված ընթացիկ արժեթղթեր			
5.9	Այլ ֆինանսական պարտավորություններ			
5.10	Հետաձգված հարկային պարտավորություններ			
5.11	Ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի բաղադրիչներ			
5.12	Ապահովագրության գծով վճարվելիք գումարներ			
5.13	Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ			
5.14	Այլ վճարվելիք գումարներ			
7	***ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ***			

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն
(վարչության նախագահ)

Գլխավոր հաշվապահ ----------

Հավելված 10
«Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 7ա)

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------

Անվանումը	**Ծանոթագրություններ**	**Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան**	**Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած**	**Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամա-**	**Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսա-**

				ժամանակաշրջան (աճողական)	նախաշրջան	թիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)
1		2	3	4	5	6
1	**Եկամուտներ ապահովագրության գծով**					
2	Համախառն ապահովագրավճարներ					
3	Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ					
4	**Զուտ ապահովագրավճարներ**					
5	Եկամուտներ միջնորդավճարներից					
6	Եկամուտներ ներդրումներից					
7	Իրացված եկամուտներ					
8	Իրական արժեքից օգուտներ և կորուստներ					
9	Այլ գործառնական եկամուտ					
10	**Այլ եկամուտ**					
11	**Ընդամենը եկամուտ**					
12	Համախառն հատուցումներ					
13	Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներ					
14	Համախառն փոփոխություններ պայմանագրային պարտավորություններում					
15	Համախառն փոփոխություններ վերաապահովագրողներին փոխանցված պայմանագրային պարտավորություններում					

16	**Զուտ հատուցումներ**					
17	Ֆինանսական ծախսեր					
18	Այլ գործառնական և վարչական ծախսեր					
19	**Այլ ծախսեր**					
20	**Ընդամենը հատուցումներ և այլ ծախսեր**					
21	**Շահույթ հարկումից առաջ**					
22	Շահութահարկի գծով ծախս					
23	**Շահույթ հարկումից հետո**					
	Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն					
	(վարչության նախագահ) ----------					
	Գլխավոր հաշվապահ ----------					

Հավելված 11
«Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ձև 7բ)

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան	Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)
1	**Շահույթ հարկումից հետո**					
2	Հիմնական միջոցների վերագնահատումից					

	փոփոխություններ					
3	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ					
4	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասներ					
5	Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների և վնասների արդյունավետ մաս					
6	Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող օգուտներ և վնասներ					
7	Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ					
8	Այլ համապարփակ եկամտի տարրերի գծով շահութահարկի ծախս					
9	**Այլ համապարփակ եկամուտ հարկումից**					
10	**Ընդամենը համապարփակ եկամուտ հարկումից հետո**					
	Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն					
	(վարչության նախագահ) ----------					
	Գլխավոր հաշվապահ ----------					

Հավելված 12
«Ապահովագրական ընկերությունների

հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Ձև 7գ)

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------

Անվանումը	**Ծանոթագրություններ**	**Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան**	**Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողա-**	**Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան**	**Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակա-**

				կան)		**շրջան (աճո-ղա-կան)**
1		**2**	**3**	**4**	**5**	**6**
1	Համախառն ապահովագրավճարներ					
2	Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ					
3	**Զուտ ապահովագրավճարներ**					
4	Եկամուտներ միջնորդավճարներից					
5	Եկամուտներ ներդրումներից					
6	Իրացված եկամուտներ					
7	Իրական արժեքից օգուտներ և կորուստներ					
8	Այլ գործառնական եկամուտ					
9	Այլ եկամուտ					
10	**Ընդամենը եկամուտ**					
11	Համախառն հատուցումներ					
12	Վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներ					
13	Համախառն փոփոխություններ տեխնիկական պահուստներում					
14	Համախառն փոփոխություններ՝ տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնում					
15	**Զուտ հատուցումներ**					
16	Ֆինանսական ծախսեր					
17	Այլ գործառնական և վարչական ծախսեր					
18	Այլ ծախսեր					

19	**Ընդամենը հատուցումներ և այլ ծախսեր**					
20	**Շահույթ հարկումից առաջ**					
21	Շահութահարկի գծով ծախս					
22	**Շահույթ հարկումից հետո**					
	Այլ համապարփակ եկամուտ.					
23	Հիմնական միջոցների վերագնահատումից փոփոխություններ					
24	Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություններ					
25	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից առաջացող օգուտները և վնասներ					
26	Դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքների գծով օգուտների և վնասների արդյունավետ մաս					
27	Օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող օգուտներ և վնասներ					
28	Սահմանված հատուցումների պլանների գծով ակտուարային օգուտներ և վնասներ					
29	Այլ համապարփակ եկամտի տարրերի գծով շահութահարկի ծախս					
30	**Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո**					
31	**Ընդամենը համապարփակ եկամուտ հարկումից հետո**					
	Ապահովագրական ընկերության գործադիր ----------					

	տնօրեն					
	(վարչության նախագահ)					
	Գլխավոր հաշվապահ ----------					

Հավելված 13
«Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 8)

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	**Կանոնադրական կապիտալ**			Գլխավոր պահուստ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Չբաշխված շահույթ	Վաճառքի համար մատչելի	Դրամ միջոցհոսք	օտարերկրյա	հիմնական միջոցների և ոչ	Սեփական կապիտալի այլ	**Ընդամենը**
	Կանոնադրա-	Հետգնված կապիտալ	Զուտ գումարը									

	կան կապի-տալ	տալ								նյութա-կան ակտիվ-ների վերա-գնա-հատ-ման պա-հուստ-ներ	տար-րեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան												
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի -------թ.												
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների												

ճշգրտումը												
2. Վերահաշվարկված մնացորդը												
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝												
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ												
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին												
4. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) համապարփակ												

եկամուտ												
5. Ներքին շարժեր, այդ թվում՝												
5.1. Մասհանումներ գլխավոր պահուստին												
5.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												
5.3. Էմիսիոն վնասի ծածկում												
5.4. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												
6. Բաշխված շահաբաժիններ												
7. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի-------թ.												
Հաշվետու ժամանակաշրջան												
8. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 01												

հունվարի -------թ.												
8.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը												
9. Վերահաշվարկված մնացորդը												
10. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝												
10.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ												
10.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ												

գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին												
11. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) համապարփակ եկամուտ												
12.1. Մասհանումներ գլխավոր պահուստին												
12.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												
12.3. Էմիսիոն վնասի ծածկում												
12.4. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												
13. Բաշխված շահաբաժիններ												
14. Մնացորդը հաշվետու												

ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի-------թ.												

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն
(վարչության նախագահ) ----------

Գլխավոր հաշվապահ ----------

Հավելված 14
«Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
(ՈՒՂՂԱԿԻ ՄԵԹՈԴ) (Ձև 9ա)

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------

Ցուցանիշի անվանումը	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
1	2	3
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված ապահովագրավճարներ		
Վերաապահովագրական գործունեությունից ստացված մուտքեր		
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝		
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Վճարված ապահովագրական հատուցումներ (ապահովագրական գումարներ)		
Փոխանցված վերաապահովագրավճարներ		
Կանխարգելիչ միջոցառումների նպատակով ծախսեր		
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		
Առհաշիվ տրված գումարներ		
Վճարումներ բյուջե		

Գործառնական այլ գործունեությունից ելքեր՝ այդ թվում		
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ոչ ընթացիկ նութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից		
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից		
Շահաբաժինների և տոկոսների ստացումից		
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝		
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ նութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով		
Ֆինանսական ակտիվների ձեռքբերումից և փոխառությունների տրամադրումից		
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝		

Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից		
Ստացված վարկերից և փոխառություններից		
Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից		
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ		
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		

Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ: Այս տողում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր:		
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջին		

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն
(վարչության նախագահ) ----------

Գլխավոր հաշվապահ ----------

Հավելված 15
«Ապահովագրական ընկերությունների
հրապարակվող ֆինանսական
հաշվետվությունների օրինակելի
ձևերը և դրանց լրացման հրահանգը»
Հավելվածի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ (ԱՆՈՒՂՂԱԿԻ ՄԵԹՈԴ) (Ձև 9բ)

_____

«---» ---------- 201—թ.

(ապահովագրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու ժամանակաշրջանը ----------			
	Ցուցանիշի անվանումը	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
	1	2	3
1	**Շահույթ հարկումից առաջ**		
	Գործառնական գործունեություն		
2	Հիմնական միջոցների ամորտիզացիա		
3	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա		
4	Հետաձգված ծախսերի ամորիտիզացիա		
5	Ապահովագրության գծով ստացվելիք միջոցների (աճ)/նվազում		
6	Վերաապահովագրական ակտիվների (աճ)/նվազում		
7	Գործառնական գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում		
8	Ապահովագրության գծով վճարվելիք միջոցների աճ/(նվազում)		
9	Տեխնիկական պահուստների մեծության աճ/(նվազում)		
10	Գործառնական գործունեությանը վերագրելի այլ պարտավորությունների աճ/(նվազում)		
11	**Գործառնական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ**		

	Ներդրումային գործունեություն		
12	Կապիտալ ծախսումներ		
13	Ներդրումներ		
14	Ներդրումային գործունեությանը վերագրելի այլ ակտիվների (աճ)/նվազում		
15	**Ներդրումային գործունեությունից ընդամենը ճշգրտումներ**		
	Ֆինանսական գործունեություն		
16	Փոխառությունների և այլ վճարվելիք գումարների աճ/(նվազում)		
17	Վճարված դիվիդենդներ		
18	Բաժնետոմսերի վաճառք (հետգնում)		
19	Ֆինանսական գործունեությանը վերագրելի այլ պարտավորություններիների աճ/(նվազում)		
20	**Ֆինանսական գործունեությունից ընդամենը ճշգրտումներ**		
21	**Փոխարժեքի տատանումների ազդեցությունը**		
22	**Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակշրջանի վերջին**		

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն
(վարչության նախագահ) ----------

Գլխավոր հաշվապահ ----------